**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի 2014թ. 1-ին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսների աշխատանքների մասին**

Ըստ վիճակագրական մարզային ծառայությունից վերցրված և մեր կողմից մշակված նախնական տվյալների **2014 թվականի առաջին կիսամյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 27,359.4 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2013 թվականի 1-ին կիսամյակի 33,531.4 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 81.6%, այսինքն բացարձակ աճը նվազել է՝ ընդամենը 6,172.0 մլն դրամով:**

2014թ. հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները մարզի արդյունաբերության ընդհանուր ցուցանիշում ունեն այսպիսի տեսք՝

- ***մշակող արդյունաբերություն*** *17,813.654մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 72.7% և տեսակարար կշիռը՝ 65.11%*
- ***հանքարդյունահանումը*** *համապատասխանաբար՝ 4,987.986 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը 113.3% և 18.23%,*
- ***էլ. էներգիայի արտադրությունը****՝ 4,065.477 մլն դրամ, 97.3% և 14.86%:*

2014թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով ևս հաստատվում է այն, որ մարզի արդյունաբերության, հատկապես մշակող արդյունաբերության ցուցանիշները մեծապես կախված են մետաղների համաշխարհային գներից: Նվազման նման զգալի ցուցանիշների պատճառը թերևս համաշխարհային շուկայում պղնձի գների տատանումներն են:

2014թ. հունվար-հունիս ամիսներին մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

(հազ. դրամ)

| | **Ճյուղի անվանումը** | **2014թ. հունվար-հունիս** | **2013թ. հունվար-հունիս** | **աճը (%)** | **2014թ. հունվ-հունիս տես. կշիռը մշակող արդյունաբե-րության մեջ (%)** |
|---|---|---|---|---|---|
| 1. | Քիմիական արդյունաբերություն | 138,801.0 | 516,140.0 | 26.9 | 0.78 |
| 2. | Թեթև արդյունաբերություն | 310,325.0 | 433,888.0 | 71.5 | 1.74 |
| 3. | Սննդի արդյունաբերություն | 2,093,313.0 | 1,582,984.0 | 150.6 | 11.75 |
| 4. | Մեքենաշինություն և սարքաշինություն | 245,931.0 | 504,323.0 | 48.76 | 1.38 |
| 5. | Փայտամշակում և կահույքի արտադրութ. | 5,127.0 | 23,967.0 | 21.39 | 0.03 |
| 6. | Մետալուրգիա | 14,712,110.0 | 21,292,522.0 | 69.09 | 82.59 |
| 7. | Այլ ճյուղեր | 308,047.0 | 317,431.0 | 97.04 | 1.73 |
| **Ընդամենը** | | **17,813,654.0** | **24,671,255.0** | **72.2** | **100.0** |

Մշակող արդյունաբերության կառուցվածքում շարունակում է գերակշիռ դերակատարություն ունենալ մետալուրգիայի ենթաճյուղը: Ի տարբերություն 2013 թվականի, երբ արտադրության ծավալների էական աճ և որպես արդյունք տեսակարար կշռի զգալի աճ ապահովեց սննդի արդյունաբերության ճյուղը, որի արտադրանքը սպառվում է հանրապետության տարածքում:
Կայուն գործընկերների և սպառման շուկաների գտնելը նախորդ 7 տարիներին հիմնախնդիր էր հանդիսանում մարզի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների համար: Ներկայումս ենթաճյուղի ձեռնարկություններից երեքն աշխատում են իրենց հզորությունների 30-40%-ի սահմաններում:
Մարզի առաջատար ենթաճյուղի՝ «Մետալուրգիա»-ի ցուցանիշներն 2014թ. հունվար-հունիս ամիսներին փոքր ինչ նվազել են: Այնուամենայնիվ «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն այս տարվա անցած 6 ամիսներին բնեղեն արտահայտությամբ արտադրել է 5014.9տ կոնվերտորային պղինձ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 778.9 տոննայով պակաս):
2014 թվականի հունվար-հունիսին ևս մարզի 6 ձեռնարկություններ արտադրանք չեն թողարկել:
2014թ. 1-ին կիսամյակի արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 57.36%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 12.86%, «Սագամար» ՓԲԸ-ն՝ 6.31%, «Ձորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 3.29%, «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 5.67%, «Գլորիա» կարի ֆաբրիկան՝ 3.32%, «Սարտոն» ՍՊԸ՝ 1.13%-ն:
Ըստ տարածաշրջանների 2014 թվականի հունվար-հունիս ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

| Տարածաշրջանի անվանումը | 2014թ. հունվար-հունիս | 2013թ. հունվար-հունիս | Աճը | | Տեսակարար կշիռը (%) |
|---|---|---|---|---|---|
| | | | Բացարձակ | (%) | |
| Սպիտակ | 1698201.6 | 1,002.776.30 | 695425.3 | 169,35 | **6.09** |
| Տաշիր | 448175.01 | 425,859.95 | 22315.06 | 105,24 | **1.61** |
| Գուգարք | 1426036.2 | 1,625,668.28 | -199632.08 | 87,72 | **5.12** |
| Ստեփանավան | 2053416.3 | 2,350,522.30 | -297106.0 | 87,36 | **7.37** |
| Թումանյան | 20343731,15 | 26,128,525.06 | -5784793.9 | 75,88 | **71.12** |
| Վանաձոր | 2424682.36 | 1,998,090.12 | 426592.24 | 121,35 | **8.70** |
| **Ընդամենը** | **27,359,430.0** | **33,531,442.0** | **-6172012.0** | **83,14** | **100.00** |

2014 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով ևս արտադրության ծավալի նվազում արձանագրվեց Ստեփանավանի տարածաշրջանում՝ 12.64%-ով («Սագամար» ՓԲԸ-ի արտադրության ծավալների նվազում), իսկ Վանաձոր քաղաքը՝ 121.35% աճ են ապահովել (չնայած քաղաքի մեքենաշինության ու սարքաշինության 3 ընկերությունների արտադրության ծավալների անկման, քիմիական ձեռնարկությունների ծավալի աճի տեմպի նվազման) արդյունաբերական ձեռնարկությունները:
ՈՒրախալի է, որ վերջին մեկ տարում՝ հունիս ամսվա արդյունքներով ևս մարզի Տաշիրի տարածաշրջանի ձեռնարկություններն արտադրության 5.24% աճ են գրանցել, որը

հատկապես պայմանավորված է ինչպես հայաստանյան ներքին շուկայում պանրի պահանջարկի, այնպես էլ ԱՊՀ երկրներ արտահանման աճով:

Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում, արդյունաբերական արտադրանքի աճի նվազման պատճառով նվազել է արտահանման ցուցանիշները՝ 34.79%-ով կամ 6238.12 մլն դրամով:

2014 թվականի 1-ին կիսամյակում մարզի արդյունաբերության ոլորտում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 5535 մարդ, որը 6.7%-ով կամ 398 մարդով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

2014 թվականի հունվար-հունիս ամիսներին արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 21 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

| | **Արտադրանքի անվանումը** | **Չափի միավորը** | **2014թ. հունվար-հունիս** | **2013թ. հունվար-հունիս** | **Բացար-ձակ աճը** |
|---|---|---|---|---|---|
| 1. | Էլեկտրաէներգիա | մլն. կվտ.ժամ | 97.0 | 116.4 | -19.4 |
| 2. | Էլեկտրաշարժիչներ | հատ | 1060.0 | 1152.0 | -92.0 |
| 3. | Ավտոգենային սարքավորումներ | հազ. հատ | 36.5 | 62.8 | -26.3 |
| 4. | Պղինձ՝ պղնձի խտանյությամբ | տոննա | 1320.9 | 918.7 | 402.2 |
| 5. | Ցինկի խտանյութ | տոննա | 2113.0 | 2279.0 | -166.0 |
| 6. | Պղինձ կոնվերտորային | տոննա | 5014.9 | 5793.8 | -778.9 |
| 7. | Պղնձի խտանյութ | տոննա | 7967.9 | 5930.6 | 2037.3 |
| 8. | Սինթետիկ կորունդ | կգ. | 0 | 4319.7 | -4319.7 |
| 9. | Լաքաներկանյութեր | տոննա | 44.5 | 81.2 | -36.7 |
| 10. | Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ | տոննա | 364.7 | 346.0 | 18.7 |
| 11. | Շինափայտ | տոննա | 53.4 | 39.9 | 13.5 |
| 12. | Պատանյութեր | տոննա | 1194.9 | 678.6 | 516.3 |
| 13. | Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ | տոննա | 3808.4 | 4275.7 | -467.3 |
| 14. | Ոչ հանքային շինանյութեր | տոննա | 15950.0 | 21390.0 | -5440.0 |
| 15. | Ալյումինե մետաղապլաստ դռներ, պատուհան. | հատ | 128.0 | 184 | -56.0 |
| 16. | Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ | հազ. հատ | 302.0 | 52.8 | 249.8 |
| 17. | Պանիր | տոննա | 171.4 | 166.7 | 4.7 |
| 18. | Հաց | տոննա | 936.2 | 844.2 | 92.0 |
| 19. | Կաթնամթերք (թթվասեր, կաթնաշոռ, մածուն, թան) | տոննա | 143.27 | 117.2 | 26.07 |
| 20. | Հրուշակեղեն | տոննա | 43.7 | 46.0 | 95.0 |
| 21. | Մակարոնեղեն | տոննա | 0 | 18.4 | -18.4 |

Մարզի արդյունաբերական արտադրանքի բնեղեն արտահայտությամբ (21 հիմնական արտադրատեսակներ) ցուցանիշներից երևում է, որ հանքարդյունաբերության ու թեթեւ արդյունաբերության եւ սննդի դրական ցուցանիշների կողքին առկա է քիմիական արդյունաբերության, մեքենաշինության-սարքաշինության և հրուշակեղենի արտադրական ցուցանիշների կանգ կամ նվազում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ.
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ.ՄԿՐՏՉՅԱՆ